Լրամշակված նախագիծ

Կ-412-17.10.2022-ՏՀ-011/0

Տեղեկանք

փոփոխվող հոդվածների

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 49-րդ կետում «կառուցման տարածքից» բառերից հետո լրացնել «գետի հունից» բառերը.

2) 50-րդ կետում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունի արգելապատնեշների» բառերը.

Հոդված 2. Օրենսգրքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 4-րդ և 5-րդ մասերով՝

«4. Հայաստանի Հանրապետությունում արգելվում է սահմանային շերտում սահմանային գետերի հունից գետավազի արդյունահանումը, բացառությամբ՝ օրենսգրքի 48.4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ոչ մետաղական օգտակար հանածոյի հանույթի միանգամյա թույլտվություն ստացած անձի կողմից սահմանային

շերտում սահմանային գետերի արգելապատնեշների կառուցման նպատակով գետի հունից գետավազի արդյունահանման դեպքերի:

5. Ընդերքի առանձին տեղամասերի օգտագործումն արգելվում է Հայաստանի Հանրապետության օրենքով ~~կամ կառավարության կողմից~~ սահմանված այլ դեպքերում:»:

Հոդված 3.

1) 30-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 2.4-րդ և 2.5-րդ մասերով.

~~1)~~ «2.4. Սահմանային շերտում սահմանային գետի գետաողողատներից ավազ արդյունահանելու նպատակով ընդերքօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից տվյալ գետի հունից ավազի արդյունահանման դեպքում ընդերքօգտագործման իրավունքը լիազոր մարմնի որոշմամբ կասեցվում է մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործով կայացված որոշումն ուժի մեջ մտնելը: Ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելու վերաբերյալ լիազոր մարմնի որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

2.5. Սույն հոդվածի 2.4-րդ մասով նախատեսված դեպքում ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելու նպատակով ազգային անվտանգության ապահովման բնագավառի լիազոր մարմինը կամ ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը լիազոր մարմին են ներկայացնում համապատասխան գրություն՝ հիմնավորող փաստաթղթերով: Լիազոր մարմինը փաստաթղթերն ուսումնասիրում և ընդերքօգտագործման իրավունքը կասեցնելու վերաբերյալ որոշումն ընդունում է դրանք ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:»:

2) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 9-10-րդ կետերով.

«9) սահմանային շերտում սահմանային գետերի գետաողողատներից ավազ արդյունահանելու նպատակով ընդերքօգտագործման իրավունք կրող անձանց կողմից տվյալ գետի հունից ավազի արդյունահանման դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվել~~ու դեպքում~~ է՝ հիմք ընդունելով

բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդագիրը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

10) սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի պաշարների արդյունահանման աշխատանքները ՋիՊիէս (Գլոբալ Տեղորոշման Համակարգ, այսուհետ՝ GPS) համակարգով չկահավորված կամ այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին չմիացված՝ հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տրանսպորտային միջոցների և (կամ) սարքավորումների միջոցով իրականացնելու դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվել էու դեպքում՝ հիմք ընդունելով բնապահպանության և ընդերքի ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդագիրը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.»:

Հոդված 34. Օրենսգրքի 48.2-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերում, 4-րդ մասի 4-րդ կետում և 6-րդ մասի 3-րդ կետում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունի արգելապատնեշների» բառերը:

Հոդված 45. Օրենսգրքի 48.4-րդ հոդվածի 1-ին մասում «կամ ջրամբարների» բառերից հետո լրացնել «կամ գետերի հունի արգելապատնեշների» բառերը:

Հոդված 56. Օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 26.1-ին կետով.

«26.1) սահմանային շերտում սահմանային գետերի ափերին գտնվող գետաողողատային տիպի հանքավայրերից ավազի և ավազակոպճային խառնուրդի պաշարների արդյունահանման աշխատանքների իրականացումն ապահովել GPS համակարգով կահավորված և այդ համակարգը սերվերային ենթակառուցվածքին միացված՝ հանութաբարձիչ և հանութափոխադրիչ տրանսպորտային միջոցների և (կամ) սարքավորումների միջոցով: Սույն կետում նշված տրանսպորտային միջոցները կամ սարքավորումները GPS համակարգով կահավորված լինելու պայմանները սահմանում է կառավարությունը սույն օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 25-րդ կետում սահմանված լիազորության շրջանակներում.»:

Հոդված 67. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը Կառավարությունը սահմանում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում: